ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հոկտեմբերի 2022 թվականի N 1615 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 854-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 27-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 19-րդ միջոցառումը հաստատելու մասին» N 854-Լ որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝

«7. Ծրագրով նախատեսված օժանդակությունն իրականացնել նաև «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (նախկին անվանումը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ) վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ձևավորված դրամագլխի՝ 2003-2009 թթ. ընթացքում «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցություն» ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից ստացված ազատ դրամական միջոցների հաշվին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ